«Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում, Մոլդովայում եւ Ուկրաինայում եւ դրա ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա»

զեկույցի ներկայացում և քննարկում

Մամուլի հաղորդագրություն

30 հոկտեմբերի, 2019

Հարգելի՛ գործընկերներ,

2019 թ. հոկտեմբերի 31-ին՝ ժամը 12:00-14:00, Անի Պլազա հյուրանոցի «Գառնի» սրահում (ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 19) տեղի կունենա **«Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում, Մոլդովայում եւ Ուկրաինայում եւ դրա ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա»** զեկույցի ներկայացումն ու քննարկումը:

Զեկույցը պատրաստվել է **«Ռուսական ռազմական ներկայությունը Արևելյան գործընկերության որոշ երկրներում և դրա ազդեցությունը մարդու իրավունքների իրավիճակի վրա»** ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորում է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը (ԱլԳ ՔՀՖ):

Ծրագիրն իրականացվել է ԱլԳ ՔՀՖ վերադրամաշնորհային ծրագրի միջոցով՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբելայի Վանաձորի գրասենյակի, Մոլդովայի Պրոմո-լեքս ասոցիացիայի եւ Ուկրաինայի Արեւելյան եվրոպական անվտանգության հետազոտական նախաձեռնությունների հիմնադրամի կողմից:

Ծրագրի դոնորներն են Եվրոպական միությունը և Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդը:

Զեկույցի ներկայացում-քննարկմանը հրավիրված են ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, փորձագետներ:

Միջոցառումը բաց է լուսաբանման համար:

Հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն համաժամանակյա թարգմանությունն ապահովվելու է: Անհրաժեշտության դեպքում կապահովվի նաև ռուսերեն-հայերեն և հայերեն-ռուսերեն համաժամանակյա թարգմանություն:

Օրակարգ

«Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում, Մոլդովայում եւ Ուկրաինայում եւ դրա ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա»

զեկույցի ներկայացում եւ քննարկում

Երեւան, Անի Պլազա հյուրանոց, «Գառնի» սրահ

31 հոկտեմբերի, 2019 թ.

12:00 - 12:15 **Մասնակիցների ժամանում եւ գրանցում**

12:15 - 12:20 **Բացման խոսք**

Արթուր Սաքունց, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

12:20 - 12:30 **ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի կողմից աջակցություն ստացած ծրագրի ներկայացում**

Արմինե Սաղիկյան, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

12:30 - 13:00 **Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում, Մոլդովայում եւ Ուկրաինայում եւ դրա ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա**

Արթուր Սաքունց, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

13:00 - 13:30 **Հարցուպատասխան եւ քննարկում**

13:30 - 13:45 **Եզրափակիչ ելույթներ**

13:45 - 14:00 **Սուրճ, թեյ**